

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն

Ռ. ՔՈԶԱՐԵԱՆԸ ՆԱՄԱԿ ՄԸ ՅՂԱԾ Է ՄԱԿԻ ԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ

ԸՂ ՊՊԿԻ նախագահ Ռուպերտ Գոչարեանը շաբաթավերջին նմակ մը դրկած է ՄԱԿԻ ԱՆը նախագահ Սարտենպերկին, ուր ներկայացուցած է դարաբաղա - ատրպէյնանական հակամարտութեան հարաւային ռազմանակատի վերջին շրջանի արձանագրումը դէպքերու իսկութիւնը, որոնք շարունակաբար կը խեղափոխուին շարք մը երկիրներու կողմէ: Նամակին մէջ ընդգծուած է, որ Ռուսաստանի միջնորդութեամբ հաստատուած հրադադարը խախտուած է Ատրպէյնանի կողմէ, որու գիւտուր՝ օգտագործելով երկու տասնեակ հրասայլեր ու գրահամեմեմներ, 500 զինուորով գրաւած է մի քանի կարեւոր յեռակէտեր: Հոկտեմբեր 21ին այդ մասին տեղեակ պահուած է Հայաստանի մէջ Ռուսաստանի դեսպան Վ. Սքուպիշին: Միաժամանակ ապարդիւն փորձեր ձեռնարկուած են կապուելու Ատրպէյնանի ղեկավարութեան հետ, որպէսզի անոնք դադարեցնեն իրենց յարակուսները: Միայն այն բանէն յետոյ երբ հակահարում ստանալով ատրպէյնանական ուժերը ետ մղուեցան դէպի իրանական սահմանը, ատրպէյնանական բարձրաստիճան պաշտօնեաները ԸՂ ղեկավարութեան հետ խօսակցութեան ընթացքին խոստովանեցաւ, որ հրադադարը իրենց կողմէ խախտուած է եւ այդ մասին ալ իրենք մեղադրած են իրենց չ'ենթարկուող ռազմական միւտրները: Սակայն այս իրողութիւնը հրապարակաւ յայտարարելու յանձնառութիւնը չուզեցին ստանձնել: Այս մասին մանրամասնօրէն տեղեկացուած է ԵԱՀԿի մէջ գործող նախագահ Մարկրէթ Ա.Փ Ուկլասը, հոկտեմբեր 27ին, երբ Երեւան կը գտնուէր: Նոյն օրը ԸՂ ղեկավարութիւնը միակողմանիօրէն հրաման արձակած էր դադարեցնել ռազմական գործողութիւնները: Ատրպէյնանական կողմը կրկին բաց ձգած էր հրադադարը երկարաձգելու իրական հնարաւորութիւնը՝ գերադասելով անգամ մը եւս ստուգել հայկական դիրքերու ամրութիւնն ու փափաքած էր առաջնորդուիլ դիւանագիտական յնարակներու կասկածելի նախապահներով: Նամակին մէջ Ռ. Գոչարեանը նշած է, որ Ատրպէյնանը խախտած է հրադադարը, բայց չնայած այս իրողութիւնը փորձած է յանցանքի մեղադրանքներ արձակել Հայաստանի հասցէին: Այս է գլխաւոր պատճառը որ ՊՊԿԻ ղեկավարը անհրաժեշտ համարած է ՄԱԿԻ ուղղուած նամակին նամբով այս բացատրութիւնները փոխանցել ՄԱԿԻ պատասխանատու շրջանակներուն:

Ատրպէյնանի Մէջ Բաւարար Հաց Կայ

Ատրպէյնանի հացամթերումներու նախարարութենէն կը տեղեկացնեն, որ երկիրը մինչեւ տարեվերջ ապահովուած է ալիւրի եւ ցորենի պաշարով: Այժմ աշխատանք կը տարուի եկող տարուան կարիքները հոգալու ուղղութեամբ: «Մեխեր» թերթը կը հաղորդէ, որ այժմ համաշխարհային շուկային մէջ գինները համեմատաբար ցած են: Եթէ ընդհանրապէս հացահատիկի մէկ թոնը կը վաճառուէր 160 տոլարով, այժմ հնարաւոր է նոյն քանակութիւնը ձեռք բերել 100 - 110 տոլարով:

Կը վերածաղկի Ատրպէյնանի Կումկուսը

Պաճուի մէջ կայացած է Ատրպէյնանի Համայնավար կուսակցութեան վերականգնող համագումարը: Կուսակցութիւնը լուծուած էր 1991 թուականին, իսկ այժմ ընթացքի մէջ է համայնավարներուն հաշուարումը եւ կը վերականգնի սկզբնական կազմակերպութիւններու գործունէութիւնը: Ընդունուած է դիմում մը Ատրպէյնանի բոլոր համայնավարներուն, ուր կոչ կ'ըլլայ քաղաքական ու կուսակցական աշխուժութիւն ցուցաբերել արագացնել կուսակցութեան վերականգնման աշխատանքները: Կուսակցութեան գլխաւոր քարտուղար ընտրուած է պատմական գիտութիւններու տոբոթոր Սայատ Սայատովը, որ մինչ այդ կը գլխաւորէր Յեղափոխական վերածնունդի կուսակցութիւնը:

ԵՐԵՒԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԸ ԽՕՍԱԾ Է ԹՈՒՔԻՈՅԻ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ՄԱՍԻՆ

Թոբիոյի մէջ կայացած աշխարհի մայրաքաղաքներու երրորդ հաւաքին հրաւիրուած էին 85 երկիրներ, որոնց կարգին նախկին Խ. Միութեան հանրապետութիւններէն՝ Մոսկուան, Քիւբը, Միւսկը, Ռիկան եւ Երեւանը: Երեւանի քաղաքապետ Վահագն Խաչատրեանը, որ մասնակցած էր այս համաժողովին, Երեւանի քաղաքապետական խորհուրդի պատգամաւորներուն ներկայացուց Թոբիոյի մէջ կատարուած հաւաքի աշխատանքները: Ան ըսաւ, որ կազմակերպուած էր բարձր մակարդակով, քաղաքական իւրաքանչիւր մայրաքաղաքի խնդիրներուն: Այդ իմաստով ալ անակնկալ մըն էր իրենց ունեցած լայն ծանօթութիւնը Հայաստան պետութեան եւ Երեւանի իբրեւ մայրաքաղաք իրավիճակներու մասին: Այս քաղաքներու համաժողովը տեւած է 3 օր եւ հիմնականօրէն քննարկուած են մայրաքաղաքներուն կարգավիճակները, մայրաքաղաք - պետութիւն տնտեսական յարաբերութիւնները, միջավայրի եւ փոխադրութեան առընչուած խնդիրներ, եւ այլն: Երեւանի քաղաքապետը ժողովականներուն ներկա-

կրթմանի շրջանէն՝ երբ Բիւզանդ Թորիկան Հ. Մ. Ը. Մ.ի հիմնադրութեան 75-ամեակին առիթով նախաձեռնած է «Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան Պատմութեան» հրատարակութեան, որուն առաջին հատորը, որ կ'ընդգրկէ սկիզբէն մինչեւ 1939 թուականը, լոյս պիտի տեսնէ մօտերս:

Առ այդ, կոչ կ'ուղղենք աշխարհացրիւ բոլոր Հ. Մ. Ը. Մ.ակններուն, յատկապէս երեց տարիքի մեր անդամներուն, համակիրներուն եւ վարչութիւններուն, որպէսզի եթէ ունին անտիպ նկարներ, փաստաթուղթեր կամ վկայութիւններ շուտով ուղարկեն մեր հասցէին:

HOMENETMEN CENTRAL COMMITTEE
P. O. BOX 70509
ANTILIAS - LEBANON
Հ. Մ. Ը. Մ.ի կեդրոնական վարչութիւն

Ս Ո Մ Ա Լ Ի Ա

Զօրավար Այտիթ Կը Զգուշացնէ

Սոմալի մենաակը զօրավար Այտիթ կը զգուշացնէ ՄԱԿԻ եւ ամերիկեան ուժերու Սոմալիոյ մայրաքաղաք Մոկա-տիշուի փողոցներուն մէջ չըջազայելու, այլապէս իր բանա-տիչուի փողոցներուն մէջ չըջազայելու, այլապէս իր բանա-տիչուի մաս կազմող արձակագէտները կրակ պիտի բանան իրենց դէմ եւ հակադարձութեան պարագային երկրէն ներս արդէն դուրս չունեն լարուած վիճակը քիչ մը աւելի պիտի սրէ: Զօրավարի կողմէ դիրքի այս կարծրացումը եւ այլամերժ կեց-ւածքը լրջօրէն կը մտահոգէ ոչ միայն ամերիկեան կառավա-րութիւնը այլ նաեւ ՄԱԿԻ պատասխանատու չըջանակները:

Պ Ո Ւ Ր Ո Ւ Ն Տ Ի

Սովամահութիւն Ու Զարդ

Արեւելեան Ափրիկէի այս երկիրը քաղաքացիական պատերազմի լուրջ տագնապ կը դիմագրաւէ: Մէկ կողմէն ներքին պատերազմն ու բախումները, միւս կողմէ սովամահ-հուժիւնը: Յեղախումբեր հաշիւ կը մաքրեն իրար միջեւ, իրար ջարդելով: Երկրի վարչապետուհին ժամանակաւոր կերպով ապաստան գտաւ Պուրունտիի Փրանսական դեսպանատան մէջ, զինք հալածող ընդդիմադիրներէն փրկուելու համար:

յայտուցած է Հայաստանի մայրաքաղաքի դիմագրաւող դժուարութիւնները: Ժողովի աւարտին որոշուած է նոյնա-նման յառաջիկայ համաժողով մը գումարել 1998ին, Պուէնոս Այրէսի մէջ, որու նախապատրաստման համար Եւրոպայի մէջ ստեղծուած են 5 տարածաշրջանային կեդրոններ՝ Երեւան, Մոսկուա, Լոնտոն, Փարիզ եւ Պերիլ: Երեւանը պարտաւոր պիտի ըլլայ զբաղուիլ իրենց կցուած 4 մայրաքաղաքներուն հետ, ինչպէս Աթէնք, Քիւբ, Պուրթէ եւ Սոփիա: Տարին երկու անգամ պիտի կազմակերպուին քննարկումներ եւ անոր ար-դիւնքները պիտի ներկայացուին Պուէնոս Այրէսի քաղաքապետ-տարայնը՝ նախատեսուած հաւաքը կազմակերպելու նպա-տակով: Քաղաքապետը տեղեկութիւններ փոխանցեց Թոբիո-յի քաղաքապետարանի կառուցուածքի աշխատակարգի մա-սին:

Զինապարտութեան Օրէնքը Կը Բարեփոխուի

Գերագոյն խորհուրդի որոշումով փոփոխութիւններ եւ լրացումներ կատարուած են զինապարտութեան օրէնքին մէջ: Գիտ պաշտպանութեան եւ ներքին գործոց հարցերու յանձնախումբի նախագահ Գեորգ Պաղտասարեան յստակա-ցուցած է, որ կատարուած փոփոխութիւններու նպատակն է զինապարտութենէն խուսափելու հնարաւորութիւնները սահմանափակել եւ ատով իսկ զինապարտներու թիւը բազ-մացնել:

Գնահատելով զինապարտութեան օրէնքի որոշ յօդ-ւածները վերատեսութեան ենթարկելու անհրաժեշտութիւնը, պետական նախարար Վազգէն Սարգսեան եւս նկատել տուած է, որ այս կերպով պիտի փակուին բոլոր զարտուղի նամբա-ները: Ըստ իր տեսակներուն, արդէն իսկ յայտնաբերուած են 700 դասալիքներ, իսկ 600 ուրիշներ ինքնակամ կերպով ներ-կայացած են:

Հայ - Ատրպէյնանական Գրասենեակ

Ազգային Մտաւորականներու Միութիւնը կը պատ-րաստուի Մոսկուայի մէջ ստեղծել հայ - ատրպէյնանական հասարակական կազմակերպութիւններու գրասենեակ մը: Միութեան համակարգող խորհուրդի նախագահ Սարգիս Ասատրեանի խօսքերով, նախաձեռնութեան հեղինակները մտադիր են լուրջ հիմքեր ստեղծել երկու պետութիւններու միջեւ տեղեկատուութեան, պատանդներու փոխանակման, ինչպէս նաեւ տնտեսական համագործակցութեան համար:

«Մենք պէտք է արմատախիլ ընենք պատանդներու վա-ճառքով կամ պենսիոնի ու սննդամթերքի առևտուրով զբաղող-ներու այսպէս կոչուած վաճառականութիւնը, օրինական հիմ-քերու վրայ դնելով նման կարգի յարաբերութիւնները», ըսած է միութեան նախագահը:

Մտաւորականներու Միութիւնը, որ իր առաջնութիւն-ներէն մէկը կը համարէ ժողովրդական դիւանագիտութիւնը, արդէն ստացած է Ատրպէյնանի 8 հասարակական կազմա-կերպութիւններու համաձայնութիւնը: